ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2021/53

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունիսի 2021 թ. N 53

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ /ԵՊԿ/

Գործունեության հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Սայաթ-Նովայի փող., 1

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **ինստիտուցիոնալ հավատարմագրում, 4 տարի ժամկետով՝ 11.04.2015թ.- 11.04.2019թ**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021 թվականի հունիսի 19-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԵՊԿ, Կոնսերվատորիա) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 5 մարտի 2019թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 20 սեպտեմբերի 2019թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 9-13 դեկտեմբերի 2019թ
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 10 մարտի 2020թ.
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝ 7 մայիսի 2020թ.

«Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Ենթակառուցվածք և ռեսուրսներ», «Որակի ներքին ապահովման համակարգ»** չափանիշները գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ԵՊԿ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհի դիտողություններն ու առաջարկությունները, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ԵՊԿ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբի կողմից հաշվի է առնվել, որ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան երաժշտական մշակույթի կրթական, գիտական և ստեղծագործական հաստատություն է: ԵՊԿ-ն բարձրագույն կրթության բոլոր մակարդակներում երաժշտական կրթություն ապահովող միակ պետական բուհն է Հայաստանում:

ԵՊԿ-ն 2014 թվականին անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց և, հաշվի առնելով գործընթացի շրջանակում ստացված խորհրդատվությունները, կազմել է բարելավման գործողությունների ծրագիր: Գնահատվել է նաև Կոնսերվատորիայի առաջընթացը նախորդ հավատարմագրման գործընթացից հետո:

1. ***ԵՊԿ-ն հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:***

Կոնսրվատորիայում գործող կրթական ծրագրերն ու ՊԴ կազմն ապահովում են արդի, գործնական հմտություններով, ՈԱԾ-ի և գործատուների պահանջներին համապատասխան շրջանավարտների պատրաստումը: Այնուամենայնիվ ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման քաղաքականություն և մեխանիզմներ սահմանված չեն, ուսումնառության արդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականությունը բացակայում է:

Միևնույն ժամանակ առկա նյութական և ֆինանսական ռեսուրսները բավարար չեն մոտ ապագայում Կոնսերվատորիայում իրականացվող ուսումնական գործընթացների կայունությունն ապահովելու համար:

2. ***Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը***

2019-2024 թթ. ռազմավարական ծրագրում, հաշվի առնելով նախորդ հավատարմագրման ընթացքում տրված խորհրդատվությունը, Կոնսերվատորիայի առաքելությունը հստակեցվել է, սահմանվել է նաև ԵՊԿ-ի Գյումրու մասնաճյուղի առաքելությունը:

ԵՊԿ-ի սահմանված և հրապարակված առաքելություն և ռազմավարական նպատակներն ընդհանուր առմամբ արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները: Սակայն 2019-2024թթ. ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների իրականացմանն ուղղված գործողությունների պլանում բացակայում են՝ ժամանակացույցը, սահմանված չեն պատասխանատուները և գնահատման ցուցիչները (KPI), ինչը դժվարեցնում է ռազմավարական ծրագրի իրականացման կազմակերպումը:

ՌԾ-ից բխող միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման բացակայությունը փաստում է, որ Կոնսերվատորիայի ղեկավարությունը չի առաջնորդվում հաստատված ՌԾ-ով, իսկ հաշվետվությունները հիմնված չեն ՌԾ-ի վրա: Տվյալների հավաքագրման մեխանիզմները համակարգված չեն և չեն նպաստում ռազմավարական կառավարմանը:

Որակի ապահովումը չի դիտարկվում որպես Կոնսերվատորիայի կառավարման համակարգի անբաժան մաս: ԵՊԿ-ի գործունեության բոլոր ուղղությունների որակի ապահովման քաղաքականությունը ձևակերպված չէ, սահմանված չեն ներքին որակի ապահովման ընթացակարգերը և գործիքակազմը: Այս ամենը ռիսկի տակ է դնում Կոնսերվատորիայի գործունեության նպատակաուղղվածությունը, արդյունավետությունը և շարունակական բարելավումը:

Որակի ապահովման համակարգը դեռ չի զբաղվում թիրախային խնդիրների վերհանմամբ և հիմնականում զբաղված է այլ ստորաբաժանումների գործառույթների աջակցությամբ:

3. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն:

Թեև հետազոտական գործունեության հավակնությունները և հետաքրքրությունները սահմանված են ՌԾ-ում, սակայն չկա հետազոտական գործունեության զարգացմանն ուղղված առանձին ռազմավարական ծրագիր, բացակայում են ինստիտուցիոնալ միջնաժամկետ և կարճաժամկետ հետազոտական պլանավորումները, առկա չէ որևէ քաղաքականություն հետազոտությունների իրականացման համար, չի կարևորվում հետազոտական գործունեության միջազգայնացումը, հիմնականում բացակայում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմները:

Կոնսերվատորիայում իրականացվող հետազոտական, ստեղծագործական գործունեությունը դասախոսների անհատական նախաձեռնության արդյունք են և ինստիտուցիոնալ առումով չեն համակարգվում:

Գիտահետազոտական աշխատանքի մշտադիտարկման և արդյունավետության գնահատման մեխանիզմներ չեն կիրառվում:

Կոնսերվատորիան հանդիսանում է Եվրոպական կոնսերվատորիաների ասոցիացիայի (AEC) անդամ: ԵՊԿ-ն ունի բազմաթիվ միջազգային պայմանագրեր նախկին ԽՍՀՄ և եվրոպական պետությունների, ինչպես նաև ԱՄՆ-ի երաժշտության, մշակույթի և արվեստի տարբեր բուհերի հետ: Կոնսերվատորիան համագործակցում է տեղական բոլոր երաժշտական կրթական հաստատությունների (քոլեջների, դպրոցների և այլն), ինչպես նաև գիտական, հասարակական, բարեգործական և այլ կազմակերպությունների հետ:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ԵՊԿ-ի կողմից ներկայացված ծրագիրն իրատեսական է, վերհանված խնդիրները հիմնականում ճիշտ են ընկալվել և բարելավումները բուհին կտանեն զարգացման:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսրվատորիա» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.
   - **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Ենթակառուցվածք և ռեսուրսներ», «Որակի ապահովման ներքին համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,
   - կառավարման և որակի ներքին ապահովման համակարգերի բարելավումը, փոխկապակցումը և ներդրումը որպես առաջնահերթություն,
   - գործընթացների իրականացման և գնահատման համար նախանշված ժամկետների, պատասխանատուների, անհրաժեշտ ռեսուրսների և կատարողականի ցուցիչների (KPI) հստակեցման անհրաժեշտությունը,
3. Հատուկ ուշադրություն դարձնել.
   - կառավարման մարմինների միջև իշխանության և լիազորությունների բաշխմանը, աշխատանքի հստակ բաժանմանը:
   - ԵՊԿ-ում որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի ներդրմանը,
   - ուսումնական միջավայրի բարելավմանն ուղղված ֆինանսական միջոցների հայթայթմանը,
   - ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի թվի օպտիմալացմանն ու երիտասարդացմանը,
   - ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը,
   - միջազգային փորձագետների կողմից տրված խորհրդատվություններին:
4. Կազմակերպել իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ԵՊԿ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Ա. Սաղյան**

2021 թ. հունիսի 19
ք.Երևան